

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ
*Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիյ. թեկ.
ՍԱՄՎԵԼ ԶԱԲԱՂՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, մագիստրոս*

ANAHIT MANASYAN
*Vice-Rector of the Academy of Justice of the Republic of Armenia,
Associate Professor at the Chair of Constitutional Law of YSU,
Candidate of Legal Sciences
SAMVEL JABAGHYAN
Master of Jurisprudence, YSU Faculty of Law*

АНАИТ МАНАСЯН
*Проректор Академии юстиции Республики Армения, Доцент кафедры
конституционного права ЕГУ, Кандидат юридических наук
САМВЕЛ ДЖАБАГЯН
Магистр юриспруденции, Юридический факультет ЕГУ*

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ՈՒ ԴՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

**INSTITUTE OF THE IMMUNITY OF THE RA PRESIDENT
AND THE PRIME MINISTER AND ITS OVERCOMING IN THE
PARLIAMENTARY GOVERNANCE SYSTEM: ISSUES OF THEORY
AND PRACTICE**

**ИНСТИТУТ НЕПРИКОСНОВЕННОСТИ ПРЕЗИДЕНТА И
ПРЕМЬЕР-МИНИСТРА РА И ЕГО ПРЕОДОЛЕНИЕ В КОНТЕКСТЕ
ПАРЛАМЕНТСКОЙ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ: ВОПРОСЫ ТЕОРИИ
И ПРАКТИКИ**

I. Ներածություն

Վերջին ժամանակներում տարբեր պետությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց շուրջ ընթացող իրավաքաղաքական գործընթացները ցույց են տալիս, որ մի շարք հարցադրումներ, ինչպիսիք են պետության գլխին պաշտոնանկ անելու ընթացակարգը և բարձրաստիճան պաշտոնատար անձանց ան-

ձեռնմխելիության ինստիտուտը, խոր ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում նոր ընթացակարգեր նախատեսող իրավական կարգավորումների ամրագրման կարիք ունեն:

ՀՀ Սահմանադրության մեջ 2015 թվականին կատարված մեծածավալ և առանցքային փոփոխությունների արդյունքում պետական իշխանության ճյուղերի և առանձին սահմանադրական մարմինների միջև տեղի ունեցան գործառույթների և լիազորությունների արմատական վերաբաշխումներ: Արդյունքում հասարակական հարաբերությունների պատշաճ կանոնակարգման, հանրային իշխանության բարձրագույն մարմինների գործառույթների իրականացման գործընթացում իրավական հնարավոր փակուղիների առաջացումից խուսափելու համար օրակարգային անհրաժեշտություն դարձավ նշված մարմինների անկախությունը երաշխավորող կառուցակարգերի և ընթացակարգերի կատարելագործումը:

Սույն գիտական հոդվածում մեր կողմից վերլուծության են ենթարկվում հետևյալ հիմնական խնդիրները.

ա) ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության մասին գործերի քննության ինստիտուտն ունի վերանայման, իսկ վերջինիս առնչվող ՀՀ Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նորմերը՝ կատարելագործման անհրաժեշտություն.

բ) ՀՀ Սահմանադրության մեջ 2015 թվականին կատարված փոփոխություններով, թեև անցում է կատարվել խորհրդարանական կառավարման համակարգին, սակայն ՀՀ վարչապետին սահմանադիրը չի օժտել անձեռնմխելիությամբ, ինչը կարող է վտանգել վերջինիս կողմից իր լիազորությունների պատշաճ իրականացումը:

Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ կարգավորումների առկայությունն ու կատարելագործումը, երաշխավորելով հանրային իշխանության բարձրագույն մարմինների անկախությունը, ինքնին ուղղված կլինի նաև սահմանադրական կայունությանը՝ դրանով իսկ խթանելով և ամրապնդելով ժողովրդավարությունը:

II. ՀՀ նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության մասին գործերի քննությունը

Տեսության մեջ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի իրավական կարգավիճակն ընդունված է բնութագրել որպես վերջիններիս՝ Սահմանադրությամբ և օրենքով վերապահված լիազորությունները և պատասխանատվությունը սահմանող նորմերի ամբողջություն:

Իրավական կարգավիճակն ունի երկու ինքնուրույն բաղադրիչ՝ նորմատիվ իրավական կարգավիճակ, որի բովանդակությունը նախատեսվում է իրավունքի նորմերով, և փաստացի իրավական կարգավիճակ՝ որպես իրավահարաբերության մասնակցի իրական դրություն կոնկրետ սոցիալ-տնտեսական պայմաններ

րում¹:

Որպեսզի որևէ մարմին կամ պաշտոնատար անձ ի զորու լինի բնականոն կերպով իրականացնելու Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված լիազորությունները, վերջինիս պետք է տրվեն այդ լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ անձնական և գործառնության երաշխիքներ:

Հետևաբար կարևորագույն սահմանադրական գործառնություններ իրականացնող մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձինք պետությունների հիմնական օրենքներով օժտվում են անձեռնմխելիությամբ:

Անձեռնմխելիության հիմնական և առաջնային նպատակն այդ անձանց բնականոն և արդյունավետ գործունեությունը երաշխավորելն է, ինչպես նաև պաշտպանելն իրենց լիազորություններին ոչ իրավաչափ միջամտություններից և անհիմն հետապնդումներից²:

Որպես կանոն, Հանրապետության նախագահի ինստիտուտը նախատեսող բոլոր սահմանադրությունները սահմանում են նաև վերջինիս անձեռնմխելիությանն առնչվող կարգավորումներ:

Նախագահը պետք է հնարավորինս ազատ լինի իր գործողությունների համար բացասական հետևանքներ կրելու սպառնալիքից³: Ուստի անձեռնմխելիությունն ապահովում է, որ հետագայում պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքը չխոչընդոտի նրան իրականացնել իր լիազորությունները, քանի որ սպառնալիքի առկայությունը կարող է սահմանափակել վերջինիս առնվազն իր հայեցողական լիազորություններն իրականացնելու հարցում⁴:

Անձեռնմխելիության նպատակներից է նաև պետական իշխանության արդյունավետ գործունեության երաշխավորումը⁵ և վերջինիս շարունակականության ապահովումը⁶: Ավելին՝ անձեռնմխելիությունը կոչված է նաև իշխանությունների տարանջատման սկզբունքի պահպանմանը⁷:

Հետևաբար գործադիր իշխանության ղեկավարին անձեռնմխելիությունը պետք է շնորհվի այն ծավալով, որ վերջինս հնարավորություն ունենա անկաշկանդ իրականացնելու իր լիազորությունները:

Սահմանադրական անձեռնմխելիության բովանդակությունը և դրա հաղթահարման ընթացակարգն անձեռնմխելիությամբ օժտված բոլոր պաշտոնատար

¹ Տե՛ս *Ավագյան Վ. Ա.*, Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում: Թեկն. ատեն., սեղմագիր, Երևան, 2009, էջ 53:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-1476 որոշում:

³ Տե՛ս *Erwin Chemerinsky*, *Federal jurisdiction* (2d ed. 1994), էջ 459:

⁴ Տե՛ս *Jon O. Newman*, *Suing the Lawbreakers: Proposals to Strengthen the Section 1983 Damage Remedy for Law Enforcers' Misconduct*, 87 *YALE L.J.* 447 (1978), էջ 462:

⁵ Տե՛ս ԱՄՆ Գերագույն դատարանի *Barr v. Matteo*, 360 U.S. 564 (1959) գործով 1959 թվականի հունիսի 29-ին կայացված որոշումը, <https://caselaw.findlaw.com/us-supreme-court/360/564.html> (վերջին մուտք՝ 02.03.2020 թ.):

⁶ Տե՛ս *Karin Oellers-Frahm*, *Italy and France: Immunity for the Prime Minister of Italy and the President of the French Republic*, 2005, էջ 115:

⁷ Տե՛ս *Céline Lageot*, *The lack of political responsibility of the French President under the Constitution of 1958 and the old article 68*, 2009, էջ 222:

անձանց համար նույնական չեն: Ուստի, կախված կոնկրետ պաշտոնատար անձի կարգավիճակի առանձնահատկություններից, անձեռնմխելիությունն ունի տարբեր ծավալներ և հաղթահարման տարատեսակ ընթացակարգեր⁸:

Անձեռնմխելիությունը հաղթահարելու անհրաժեշտություն է առաջանում այն դեպքերում, երբ Նախագահի կողմից կատարվում են արարքներ, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում Նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կամ նրան պաշտոնանկ անելու համար: Մինչույն ժամանակ նշենք, որ սույն հոդվածի նպատակը ոչ թե իմփիչմենթի հիմքերի, այլ անձեռնմխելիության հաղթահարման ընթացակարգերի հետազոտությունն է:

Սահմանադրական իրավունքում Նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման ինստիտուտը հայտնի է իմփիչմենթ անվամբ: Այն, որպես կանոն, բոլոր երկրներում աչքի է ընկնում կիրառման խիստ բարդեցված ընթացակարգով, որին իրենց մասնակցությունն են ունենում միաժամանակ մի քանի պետական մարմիններ:

Իմփիչմենթի գործընթացում պետական մարմինների ներգրավվածության առումով աշխարհում առանձնացվում են երկու հիմնական մոդելներ: Առաջինում իմփիչմենթի գործընթացին մասնակցում է միայն խորհրդարանը՝ սկսած «մեղադրանքի» առաջադրումից մինչև դրա արդյունքներով որոշման կայացում: Իմփիչմենթի մյուս մոդելն ունեցող երկրներում այս գործընթացում, խորհրդարանից բացի, ներգրավվում է նաև դատական կամ ad hoc այլ մարմին, կամ իրականացվում է հանրաքվե (Իսլանդիա, Ավստրիա, Ալբանիա, Բուլղարիա, Խորվաթիա, Գերմանիա, Լեհաստան և այլն): Այս կարգավորումը հնարավորություն է տալիս հակակշռելու խորհրդարանի կողմից հնարավոր չարաշահումների դրսևորումները⁹:

Իմփիչմենթը համարվում է միաժամանակ և՛ իրավական, և՛ քաղաքական գործընթաց¹⁰: Համաշխարհային վերջին զարգացումները ցույց են տալիս, որ դատական իշխանության մարմիններն աստիճանաբար ավելի և ավելի մեծ դերակատարություն են ստանում այս գործընթացում: Նման միտումը բխում է այն ակնկալիքից, որ դատարանները, հատկապես՝ նոր ձևավորվող ժողովրդավարություններում, պետք է լինեն սահմանադրական նորմերի իրացման և նոր ժողովրդավարական արժեքների պահպանման գործընթացի կարևոր մասնակիցներ¹¹:

Իմփիչմենթի գործընթացը և դրա հետևանքները տարբերվում են քրեական վարույթից: Ակնհայտ է, որ պաշտոնանկ արված անձը քրեական վարույթի արդյունքում կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Սակայն իմփիչմենթն ինքնին հանրային դեմքին հասարակական վստահության խախտման կամ չարաշահման համար պատասխանատվության ենթարկելու եղանակ է

⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-1476 որոշում:

⁹ Տե՛ս Baumgartner J., and Kada N., (eds), *Checking Executive Power: Presidential Impeachment in Comparative Perspective* (Praeger 2003), էջ 142:

¹⁰ Տե՛ս Akhil Reed Amar, *On Impeaching Presidents*, Yale Law School, 1999, էջ 294:

¹¹ Տե՛ս Tate N., Vallinder T., *The Global Expansion of Judicial Power*, NYU Press, 1995 – Law:

և ոչ այնքան հանցագործությունների դեմ պայքարի միջոց¹²:

Հարավային Կորեայի Սահմանադրությունը, օրինակ, հստակորեն տարբերակում է նշված ինստիտուտները: Վերջինիս 65-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իմփիչմենթի վերաբերյալ որոշումը պետք է սահմանափակվի պաշտոնանկությանը՝ պայմանով, որ այդ հանգամանքը պաշտոնանկ արված անձին չի ազատում քաղաքացիական կամ քրեական պատասխանատվությունից¹³:

Իմփիչմենթը նաև քաղաքական գործիք է: Այդ է պատճառը, որ իր կիրառման ընթացակարգով քրեական վարույթից տարբերվելը նպատակ է հետապնդում ոչ միայն երաշխավորելու իմփիչմենթի ենթարկվող անձանց իրավունքների պատշաճ պաշտպանությունը, այլ, առաջին հերթին, ապահովելու պետական իշխանության բնականոն գործունեությունը, քանի որ պաշտոնանկության գործընթացը վերաբերում է պետական ապարատում ամենաազդեցիկ և ամենաառանցքային դիրք ունեցող անձանց:

ՀՀ Սահմանադրության (2015 թ. խմբագրությամբ) 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահն անձեռնմխելի է: Ընդ որում, Նախագահն օժտված է ինչպես գործառույթային, այնպես էլ անձնական անձեռնմխելիությամբ: Գործառույթային անձեռնմխելիությունն ամրագրված է նշված հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Իսկ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն իր լիազորությունների ավարտից հետո (անձնական անձեռնմխելիություն):

Բոլոր այն դեպքերում, երբ Նախագահի կողմից կատարվում է վերջինիս պաշտոնանկության հիմք համարվող արարք, անհրաժեշտ է նախ և առաջ հաղթահարել Սահմանադրությամբ նախատեսված անձեռնմխելիությունը:

Սահմանադրության 141-րդ հոդվածում ամրագրված են Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվում են Նախագահի պաշտոնանկության երեք հիմքեր՝ պետական դավաճանություն կատարելը, որևէ այլ ծանր հանցագործություն կատարելը կամ Սահմանադրության կոպիտ խախտումը: Ընդ որում, Նախագահի կողմից նշված երեք արարքներից որևէ մեկի կատարման փաստը հաստատվում է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից: Այսպես, Սահմանադրության 141-րդ հոդվածի 2-րդ մասի համա-

¹² Տե՛ս Impeachment and the Constitution, Congressional Research Service, էջ 14-15, <https://crsreports.congress.gov/product/pdf/R/R46013> (վերջին մուտքը՝ 01.03.2020 թ.):

¹³ Տե՛ս Կորեայի Հանրապետության 1987 թվականի Սահմանադրություն, <http://www.law.go.kr/IsInfoP.do?IsiSeq=61603&urlMode=engLsInfoR&viewClis=engLsInfoR#0000> (վերջին մուտք՝ 03.03.2020 թ.):

ձայն, Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննության կարգն ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 80-րդ հոդվածում, որի 14-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ եզրակացություններից մեկը.

- 1) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին.
- 2) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

Հետևաբար ՀՀ Սահմանադրական դատարանին է վերապահված նաև Նախագահի արարքում պաշտոնանկ անելու հիմք հանդիսացող պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հանցակազմի առկայության ստուգումը: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանի կողմից Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին եզրակացություն տալու դեպքում, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին հարցի քննարկումը համարվում է ավարտված, Ազգային ժողովի որոշման նախագիծը հանվում է շրջանառությունից, և այն փաստերը, որոնք հերքվել են Սահմանադրական դատարանի որոշմամբ, Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծի հիմքում չեն կարող դրվել:

Գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ գործերի քննության գործող կարգավորումները խնդրահարույց են այնքանով, որքանով այդ գործերի քննության ընթացքում ՀՀ Սահմանադրական դատարանը գնահատում է Նախագահի արարքում հանցակազմի, այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ արարք կատարելու մեջ Նախագահի մեղքի առկայությունը: Այդ հանգամանքը կարող է հանգեցնել բազմաթիվ խնդիրների, որոնց կանդրադառնանք ստորև:

Այսպես, այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ գործի քննության շրջանակներում ստուգում է Նախագահի արարքում հանցակազմի առկայությունը, ըստ էության, իրականացնում է ընդհանուր իրավասության դատարանի գործառույթ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի

80-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ նշված հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունում Սահմանադրական դատարանը պետք է նշի՝ 1) Հանրապետության նախագահի այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության որակումը կամ այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ. 2) սույն մասի 1-ին կետում նշված արարքներում Հանրապետության նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց գնահատման վերաբերյալ: Ներկայացվածը, ինչպես արդեն նշեցինք, կարող է հանգեցնել տարատեսակ խնդիրների:

Ակնհայտ է, որ արարքում հանցագործության հատկանիշների առկայության պարզումը և հանցագործության որակումը՝ սահմանադրական արդարադատության էությանը բնորոշ հարցեր չեն և չեն կարող պատշաճորեն գնահատվել այդ առումով չմասնագիտացված դատական ատյանի կողմից:

Սահմանադրության 167-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

Հարկ է նկատի ունենալ, որ սահմանադրական արդարադատությունը՝ որպես դատական սահմանադրական վերահսկողության ինքնուրույն, մասնագիտացված ու ամբողջական համակարգ, դատական սահմանադրական իրավունքի նորմերի և սահմանադրական դատավարության միջոցով ապահովում է Սահմանադրության գերակայության և կայունության պահպանումը, բացահայտում, գնահատում և վերականգնում է խախտված սահմանադրական հավասարակշռությունը, երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնական ազատությունների սահմանադրական պաշտպանությունը: Իսկ դատական սահմանադրական վերահսկողության առարկա են դառնում նորմատիվ իրավական ակտերն ու պետական իշխանության մարմինների գործողությունները, գնահատվում է դրանց համապատասխանությունը երկրի Հիմնական օրենքին, և ապահովվում է այդ ակտերի ու գործողությունների սահմանադրականությունը¹⁴:

Հետևաբար սահմանադրական արդարադատության շրջանակներում քննության են ենթակա սույն սահմանադրաիրավական բնույթի հարցեր, համանմանորեն Սահմանադրական դատարանի կողմից առաջարկվող լուծումները պետք է բացառապես սահմանադրաիրավական բնույթի լինեն¹⁵:

Մինչդեռ պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հիմքով Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ

¹⁴ Տե՛ս Հարությունյան Գ., Մանասյան Ա., Սահմանադրական վերահսկողություն, Ոսումնական ձեռնարկ բուհերի համար, «Իրավունք» հրատ., 2015, էջ 30:

¹⁵ Տե՛ս Մանասյան Ա., Սահմանադրական դատարանի քաղաքական չեզոքության երաշխավորումը սահմանադրական վեճերի քննության ընթացքում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2018, № 2 (26), էջ 14:

գործերի քննության ժամանակ գնահատման առարկա են դառնում ոչ թե Սահմանադրության դրույթները կամ այլ իրավական ակտերի դրույթների, գործընթացների, պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների սահմանադրաիրավական բովանդակությունը, այլ Նախագահի արարքներում պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության հատկանիշների առկայությունը և այդ հանցագործության որակումը, այդ արարքներում Նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները, որոնք իրենց բնույթով չեն կարող հանդիսանալ սահմանադրաիրավական բնույթի հարցեր: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը նախատեսում է, որ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ վարույթն իրականացվում է քրեական հետապնդման մարմնի, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի կամ Վճռաբեկ դատարանի կողմից:

Ակնհայտ է, որ այն դեպքում, երբ Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ գործ քննելու արդյունքում Սահմանադրական դատարանը եզրակացություն է տալիս Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, նման որոշման բուն իրավական հետևանքը ոչ թե կատարված հանցագործության համար Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելն է, այլ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա Ազգային ժողովի կողմից համապատասխան որոշում ընդունելու դեպքում Նախագահին պաշտոնանկ անելը: Այդ հանգամանքն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը հետագայում լուծվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ընդհանուր իրավասության դատարանների կողմից:

Այդ առումով հնարավոր են իրավիճակներ, երբ, Սահմանադրական դատարանը Օրենքի 80-րդ հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետի համաձայն, եզրակացություն տա Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին՝ արձանագրելով կոնկրետ արարքի որակումը, մեղավորությունը հաստատող ապացույցները, այդ եզրակացության հիման վրա ՀՀ Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում կայացնի, մինչդեռ ընդհանուր իրավասության դատարանի կողմից քրեական գործի քննության արդյունքում չհաստատվի հանցագործություն կատարելու փաստը: Նման իրավիճակն ինքնին խնդրահարույց է ինչպես իրավական տարատեսակ սկզբունքների պահպանման, իրավասությունների պատշաճ սահմանազատման, սահմանադրական մարմինների հեղինակության, այնպես էլ սահմանադրական կայունության և սահմանադրական անվտանգության տեսանկյունից: Ավելին՝ վերջինս ձևախեղում է նաև վերը նշված այն նպատակները, որոնց համար ձևավորվել է Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը:

Միաժամանակ վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հանրապետության նախագահի արարքում հանցակազմի առկայության, այդ թվում՝

վերջինիս մեղավորությունը հաստատող ապացույցների գնահատման և հանցագործության որակման՝ Սահմանադրական դատարանում գործի քննության համար ամրագրված կարգը չի կարող և չի նախատեսում անհրաժեշտ երաշխիքներ հանցակազմի հատկանիշների առկայության և դրանց կատարման մեջ Նախագահի մեղավորության փաստը հաստատելուն ուղղված բազմակողմանի և լրիվ քննություն կատարելու համար:

Վերը բարձրացված խնդիրները հիմք են տալիս եզրակացնելու, որ անհրաժեշտ է կատարելագործել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ ՀՀ նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ գործերի քննության ընթացակարգը՝ բացառելով մեջբերված իրավական փակուղիների առաջացման և անձանց հիմնարար իրավունքների խախտումների հնարավորությունը:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի լուծում կարող է լինել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հիմքի առկայության գնահատումն այդ հարցով իրավասու բարձրագույն դատական ատյանին՝ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանին՝ վերապահելը՝ այդ գործերով Սահմանադրությամբ ամրագրված պաշտոնանկության սահմանադրական ընթացակարգի պահպանվածության ստուգումը վերապահելով Սահմանադրական դատարանին:

Համանման ընթացակարգ են սահմանում Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի սահմանադրությունները: Այսպես, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահը կարող է պաշտոնանկ արվել Դաշնային խորհրդի կողմից՝ պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության մեջ Պետական դումայի կողմից ներկայացված մեղադրանքի հիման վրա՝ հաստատված ՌԴ Գերագույն դատարանի՝ Նախագահի արարքում հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ եզրակացությամբ և ՌԴ Սահմանադրական դատարանի՝ մեղադրանքի առաջադրման կարգի պահպանվածության վերաբերյալ եզրակացությամբ: Ուկրաինայի Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահի պաշտոնանկության վերաբերյալ որոշումը Գերագույն ռադան ընդունում է քննության սահմանադրական ընթացակարգի պահպանվածության վերաբերյալ Սահմանադրական դատարանի եզրակացությունը և Նախագահին մեղսագրվող արարքում պետական դավաճանության կամ այլ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ Գերագույն դատարանի եզրակացությունը ստանալուց հետո:

Ինչ վերաբերում է Սահմանադրության կոպիտ խախտման հիմքով Նախագահի պաշտոնանկության վերաբերյալ գործերի քննությանը, ապա կարծում ենք, որ այս հիմքի առկայության ստուգումն անմիջականորեն բխում է սահմանադրական արդարադատություն իրականացնելու և դրանով իսկ Սահմանադրության գերակայությունն ապահովելու Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրությամբ ամրագրված առաքելությունից: Ավելին՝ ՀՀ Սահմանադրական դատա-

րանի սահմանադրական կարգավիճակից է բխում նաև Օրենքի 80-րդ հոդվածի 15-րդ մասի կարգավորումը, այն է՝ եզրակացություն ընդունելիս Սահմանադրական դատարանն իրավասու է նաև գնահատելու Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված հանցագործության հատկանիշներն ամրագրող դրույթների սահմանադրականությունը: Այս դեպքում Սահմանադրական դատարանը քննության առարկա է դարձնում ոչ թե Նախագահի արարքում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցակազմի առկայությունը, այլ տվյալ հանցակազմն ամրագրող օրենքի դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Նշենք, որ միջազգային պրակտիկայում առավել տարածված է Սահմանադրության խախտման հիմքով Նախագահի պաշտոնանկության, ուստի նաև Սահմանադրական դատարանում նշված գործերի քննության ինստիտուտը: Այսպես, Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 105-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրական դատարանը եզրակացություն է տալիս Սեյմի անդամների և այլ պետական պաշտոնատար անձանց արարքների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին: Բորվաթիայի Սահմանադրության 105-րդ հոդվածին համապատասխան՝ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել իր լիազորությունների իրականացման ընթացքում Սահմանադրությունը խախտելու համար:

Ամփոփելով նշենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ գործերի քննության գործող կարգավորումները չեն ապահովում անհրաժեշտ երաշխիքներ ինչպես հանցակազմի առկայության և արարքի կատարման մեջ Նախագահի մեղավորության փաստի հաստատմանն ուղղված բազմակողմանի և լրիվ քննություն կատարելու, այնպես էլ իրավական տարատեսակ սկզբունքների պահպանման, իրավասությունների պատշաճ սահմանազատման և սահմանադրական մարմինների հեղինակության տեսանկյունից: Ուստի առաջարկում ենք Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ գործերի քննության ընթացակարգերում Սահմանադրությամբ նախատեսել հետևյալ տարբերակված մոտեցումները.

ա) Նախագահի արարքում պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հանցակազմի առկայության մասին եզրակացությունը տալիս է Վճռաբեկ դատարանը:

բ) Նախագահի արարքում պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հիմքով պաշտոնանկության գործընթացի սահմանադրականությունը գնահատում է Սահմանադրական դատարանը:

գ) Սահմանադրության կոպիտ խախտման հիմքով Նախագահի պաշտոնանկության հիմքի առկայության վերաբերյալ գործերի քննությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը:

III. Վարչապետի անձեռնմխելիության ինստիտուտի անհրաժեշտությունը
2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների ար-

դյունքում Հայաստանի Հանրապետությունը խառը կառավարման համակարգից անցում կատարեց խորհրդարանականին: Նոր կառավարման համակարգի բնույթին համապատասխան՝ էական փոփոխությունների ենթարկվեցին Սահմանադրությամբ նախատեսված ինչպես Նախագահի, այնպես էլ Վարչապետի ինստիտուտները:

Կատարված փոփոխություններով Հանրապետության նախագահի մի շարք լիազորություններ փոխանցվեցին այլ սահմանադրական մարմինների և պաշտոնատար անձանց, մի շարք լիազորություններ էլ ձեռք բերեցին զուտ ձևական, արարողակարգային բնույթ: Օրինակ՝ մի շարք ոլորտներում, ինչպիսիք են օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին նշանակելը և հետ կանչելը, բարձրագույն դիվանագիտական աստիճանների շնորհումը, զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակումը և ազատումը, բարձրագույն զինվորական կոչումների շնորհումը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը, Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների շնորհումը, դատապարտյալներին ներում շնորհելու հարցերը, Հանրապետության նախագահին իր լիազորություններն իրականացնում է Վարչապետի առաջարկությամբ՝ ի տարբերություն Սահմանադրության նախկին խմբագրությամբ ամրագրված կարգավորումների: Միաժամանակ, խորհրդարանական կառավարման համակարգին անցում կատարելով, Նախագահի լիազորությունների սահմանափակմանը զուգընթաց, զգալիորեն ընդլայնվեցին Վարչապետի լիազորությունները, ինչը միանգամայն բնութագրական է խորհրդարանական հանրապետություններին:

Եթե խառը կառավարման համակարգին բնորոշ է գործադիր իշխանության դուալիզմը¹⁶, և, որպես կանոն, Վարչապետը գործադիր իշխանության ղեկավարումը կիսում է Նախագահի հետ, ապա խորհրդարանական կառավարման համակարգում Վարչապետն է ղեկավարում կառավարության գործունեությունը:

Այսպես, Կառավարությունը, Սահմանադրության 146-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է: Իսկ Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը: Վարչապետը կարող է Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Ավելին՝ Սահմանադրու-

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014, հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf> (վերջին մուտք՝ 12.03.2020 թ.):

թյան 153-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Կառավարության նիստերը հրավիրում և վարում է Վարչապետը:

Համեմատության համար նշենք, որ Սահմանադրության 2005 թվականի խմբագրության 86-րդ հոդվածի 2-րդ մասով Հանրապետության նախագահին իրավունք էր վերապահված արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով Կառավարության նիստ հրավիրել և վարել, իսկ 4-րդ մասով սահմանված էր, որ Հանրապետության նախագահը կարող է կասեցնել Կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար: Կառավարության գործունեության վերաբերյալ նշված լիազորություններից Սահմանադրության 2015 թվականի խմբագրությամբ պահպանվել է միայն Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը, սակայն առանց Կառավարության որոշումների գործողությունը կասեցնելու հնարավորության:

Անդրադառնալով Նախագահի՝ հրամանագրեր և կարգադրություններ ընդունելու վերաբերյալ Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությանը, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) կարծիք է հայտնել այն մասին, որ միայն կառավարության նախաձեռնությամբ իրականացման ենթակա Նախագահի լիազորությունների ավելի մեծ քանակը հստակ ցույց է տալիս Կառավարության կենտրոնական դերակատարությունը Հայաստանի իշխանությունների ապագա կառուցվածքում¹⁷:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների տեսանկյունից առանցքային նշանակություն ունի նաև զինված ուժերի ենթակայության հարցը: Այսպես, Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են: Զինված ուժերի կիրառման մասին որոշումն ընդունում է Կառավարությունը: Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման մասին որոշումը, պաշտպանության նախարարի առաջարկությամբ, կայացնում է վարչապետը և այդ մասին անհապաղ տեղեկացնում Կառավարության անդամներին: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է:

Տեղին է նշել, որ Սահմանադրության 2005 թվականի խմբագրությամբ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն էր Նախագահը, որն էլ համակարգում էր պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում էր զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (55-րդ հոդվածի 12-րդ կետ), ավելին՝ կազմա-

¹⁷ Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2015 թ. սեպտեմբերի 10 թիվ No. 757/2014 նախնական կարծիքը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfFile=CDL-PI\(2015\)015rev-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfFile=CDL-PI(2015)015rev-arm) (վերջին մուտք՝ 05.03.2020 թ.):

վորում էր Ազգային անվտանգության խորհուրդը և նախագահում այն:

Թվարկվածները Հանրապետության նախագահի կարևորագույն լիազորություններից և Նախագահի ինստիտուտը բնորոշող առանցքային հատկանիշներից էին: Մինչդեռ Սահմանադրության 2015 թվականի խմբագրությամբ այդ բնագավառում Հանրապետության նախագահի դերակատարությունը սահմանափակվեց սուկ Սահմանադրության 133-րդ հոդվածի համաձայն՝ Վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով գինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը նշանակելու, ազատելու և բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելու լիազորություններով:

Վերջապես, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հանրապետության նախագահից Կառավարությանն անցան նաև արտակարգ և ռազմական դրություն հայտարարելու լիազորությունները¹⁸:

Ուսումնասիրելով Սահմանադրության 146-րդ հոդվածով ամրագրված՝ Կառավարության գործունեության ղեկավարման ոլորտում Վարչապետի հիմնական լիազորությունները՝ ակնհայտ է դառնում, որ Վարչապետն առանցքային դեր և պատասխանատվություն է ստանձնում նաև այն բոլոր գործառույթների կատարման գործում, որոնք Սահմանադրությամբ վերապահված են Կառավարությանը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ 2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Վարչապետն օժտվեց գործադիր իշխանության ղեկավարի նոր կարգավիճակով, լիազորությունների նոր ծավալով, ամրագրվեց Վարչապետին անվստահություն հայտնելու ինստիտուտը: Ավելին՝ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով նախատեսված Վարչապետի լիազորությունները ծավալային առումով չեն զիջում Սահմանադրության 2005 թվականի խմբագրությամբ Հանրապետության նախագահի լիազորություններին, մինչդեռ, ի տարբերություն Հանրապետության նախագահի, Վարչապետն օժտված չէ անձեռնմխելիությամբ: Կարծում ենք, որ այդ հանգամանքը կարող է վտանգել Վարչապետի կողմից իր գործառույթների բնականոն և արդյունավետ իրականացումը:

Վերը շարադրվածը, մեր կարծիքով, հիմք է տալիս եզրակացնելու, որ օրակարգային է նաև վարչապետի անձեռնմխելիության ինստիտուտի սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը:

Ինչպես արդեն նշեցինք, պաշտոնատար անձի անձեռնմխելիությունը երաշխավորում է վերջինիս անկախությունը և հնարավորություն է տալիս նրան իր լիազորություններն իրականացնելու առանց միջամտությունների¹⁹: Այդ է պատճառը, որ, որպես կանոն, սահմանադրություններն անձեռնմխելիությամբ են օժտում առանցքային սահմանադրական դերակատարներին:

Այսպես, Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն, պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և

¹⁸ Տե՛ս Սահմանադրության 2005 թվականի խմբագրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետեր, Սահմանադրության 2015 թվականի խմբագրության 119-րդ հոդվածի 1-ին մաս և 120-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁹ Տե՛ս *Fausto Cuccolo*, Principi di Diritto Costituzionale, 1996, 490, Pietro Perlingieri, Commento Alla Costituzione Italiana, Art. 68 429 FF, 1997:

պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար: Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

Սահմանադրության 193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանի վրա տարածվում է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիության իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը Ազգային ժողովը լուծում է պատգամավորների ընդհանուր թվի ծայնների առնվազն երեք հինգերորդով:

Ինչպես արդեն նշեցինք, Սահմանադրության 140-րդ հոդվածով անձեռնմխելիություն է սահմանված նաև Հանրապետության նախագահի համար:

Վերը շարադրվածը և սահմանադրական դերակատարների համատեքստում վարչապետի առանցքային կարգավիճակը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ ներկայացված սահմանադրական տրամաբանությունը ենթադրում է նաև Վարչապետի անձեռնմխելիության ինստիտուտի ամրագրման անհրաժեշտությունը:

Նշենք, որ հիշյալ ինստիտուտը տարածված է նաև միջազգային պրակտիկայում: Օրինակ, Սերբիայի Հանրապետության Սահմանադրության 134-րդ հոդվածի համաձայն, Վարչապետը և Կառավարության անդամը պատասխանատվություն չեն կրում Կառավարության նիստերին և Ազգային ժողովի նիստերին արտահայտված կարծիքների կամ Կառավարության նիստերում քվեարկության համար: Վարչապետն ու Կառավարության անդամն օգտվում են անձեռնմխելիությունից որպես պատգամավոր: Պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտը նախատեսված է Սերբիայի Սահմանադրության 103-րդ հոդվածով, որի համաձայն՝ պատգամավորները չեն կարող ենթարկվել քրեական կամ այլ պատասխանատվության որպես պատգամավոր իրենց արտահայտած կարծիքի կամ կատարած քվեարկության համար: Պատգամավորը, ով իր անձեռնմխելիությունից օգտվում է, չի կարող առանց Ազգային ժողովի համաձայնության կալանավորվել, ինչպես նաև ներգրավվել այնպիսի քրեական կամ այլ դատավարության, որում կարող է վճիռ կայացվել ազատազրկման վերաբերյալ²⁰:

Առավել մանրամասն կարգավորումներ են նախատեսված Իսրայելի Սահմանադրությամբ, որի 17-րդ հոդվածի համաձայն՝ Վարչապետի նկատմամբ քրեական գործ չի կարող հարուցվել, բացառությամբ եթե դա իրականացվում է Գլխավոր դատախազի համաձայնությամբ: Չի կարող Վարչապետի պաշտոն զբաղեցնելու ընթացքում կամ դրանից հետո մեկ տարվա ընթացքում հանցագործություն կատարելու կասկածանքով քրեական վարույթ սկսվել Վարչապետի պաշտոն զբաղեցրած անձի դեմ, բացառությամբ եթե դա իրականացվում է Գլխավոր դատախազի համաձայնությամբ:

²⁰ Տե՛ս Սերբիայի Հանրապետության 2006թ.-ի Սահմանադրություն, http://www.parlament.gov.rs/upload/documents/Constitution_%20of_Serbia_pdf.pdf (Վերջին մուտք՝ 29.02.2020թ.):

Հունաստանի Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միայն խորհրդարանն է իրավասու հետապնդում իրականացնել Կաբինետի գործող կամ նախկին անդամների կամ նրանց տեղակալների նկատմամբ իրենց լիազորությունների իրականացման ընթացքում կատարված հանցագործությունների համար՝ օրենքով սահմանված կարգով²¹:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք Սահմանադրությամբ Վարչապետին օժտել անձեռնմխելիությամբ և սահմանել վերջինիս պաշտոնանկ անելու հիմքերի առկայության վերաբերյալ գործերի քննության՝ Հանրապետության նախագահի համար հոդվածի շրջանակներում ներկայացված համանման կառուցակարգ:

IV. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ խորհրդարանական կառավարման համակարգում Հանրապետության նախագահի և վարչապետի անկախությունը, լիազորությունների բնականոն իրականացումը երաշխավորելու նպատակով առաջարկում ենք.

ա) Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության վերաբերյալ գործերի քննության գործող կարգավորումները չեն ապահովում անհրաժեշտ պայմաններ ինչպես հանցակազմի առկայության և դրա կատարման մեջ Նախագահի մեղավորության փաստի հաստատմանն ուղղված բազմակողմանի և լրիվ քննություն կատարելու, այնպես էլ իրավական տարատեսակ սկզբունքների պահպանման, իրավասությունների պատշաճ սահմանազատման և սահմանադրական մարմինների հեղինակության երաշխավորման տեսանկյունից, առաջարկում ենք Նախագահի արարքում պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հանցակազմի առկայության մասին գործերի քննությունը Սահմանադրությամբ վերապահել ՀՀ Վճռաբեկ դատարանին, իսկ Նախագահի արարքում պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության հիմքով պաշտոնանկության գործընթացի սահմանադրականության գնահատումը՝ ՀՀ Սահմանադրական դատարանին:

բ) Գործող սահմանադրական կարգավորումներով ամրագրված Վարչապետի կարգավիճակը նկատի ունենալով՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրությամբ վերջինիս օժտել անձեռնմխելիությամբ և սահմանել նրան պաշտոնանկ անելու հիմքերի առկայության վերաբերյալ գործերի քննության՝ Հանրապետության նախագահի համար սույն հոդվածի շրջանակներում ներկայացված համանման կառուցակարգ:

Annotation. The article considers theoretical and practical issues of overcoming the immunity of the RA President and the Prime Minister in the parliamentary governance system. The authors substantiate that the RA constitutional and legislative regulations on providing a conclusion by the

²¹ Տե՛ս Հունաստանի Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մաս, <https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/gr/gr220en.pdf> (վերջին մուտք՝ 12.03.2020թ.):

Constitutional Court on impeaching the President due to a treason or another grave crime need improvement. In particular, it is substantiated that it will be more convenient if the issue of existence of elements of crime in the actions of the President of the Republic is considered by the Court of Cassation, and the issue of observance of the constitutional order of the impeachment on the mentioned bases is considered by the Constitutional Court. Moreover, noting the status of the Prime Minister, the authors propose to endow the latter with constitutional immunity and prescribe an order of overcoming it presented in the article for the President of the Republic.

Аннотация. В статье рассматриваются вопросы теории и практики преодоления неприкосновенности Президента и Премьер-министра РА в контексте парламентской формы правления. Авторы обосновывают, что регулирования Конституции и Законодательства РА относительно заключения Конституционного Суда о наличии оснований для отрешения Президента от должности за государственную измену или иное тяжкое преступление нуждаются в реформировании. В частности, обосновывается, что будет целесообразнее, если вопрос о наличии в действиях Президента Республики признаков преступления будет рассматриваться Кассационным судом, а вопрос соблюдения конституционного порядка отрешения Президента от должности на указанном основании – Конституционным Судом. Более того, принимая во внимание статус Премьер-министра, авторы предлагают наделить последнего конституционной неприкосновенностью и установить порядок ее преодоления, представленный в рамках статьи, касающейся Президента Республики.

Բանալի բառեր: անձեռնմխելիություն, իմփիչմենթ, անձեռնմխելիության հաղթահարում, սահմանադրափրավական բնույթի հարցեր, սահմանադրական արդարադատություն:

Key words: immunity, impeachment, overcoming of immunity, constitutional-legal issues, constitutional justice.

Ключевые слова: неприкосновенность, импичмент, преодоление неприкосновенности, конституционно-правовые вопросы, конституционное правосудие.

Ա. Մանասյան - Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկ., էլ. փոստ՝ a_manassian@yahoo.com

Ս. Զաբաղյան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, մագիստրոս, է. փոստ՝ samvel.jabaghyan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 13.03.2020, տրվել է գրախոսության՝ 13.03.2020, երաշխավորվել է իրավ. գիտ. թեկնաձու, դոցենտ Է. Շաթիրյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 16.03.2020